ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի (ՓԴԾ) կողմից ֆինանսավորվող ու «Խազեր» ՀԿ-ի կողմից իրականացվող *«ՀՀ ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների /ներդրումների" (INDC) ֆինանսական մեխանիզմի ներդրում միջին եվ փոքր քաղաքային եվ գյուղական համայնքներում»* ծրագրի շրջանակում «Խազեր» ՀԿ-ն հրավիրում է մասնակցել կլիմայի փոփոխության մեղմմանն ու որպես ուղեկցող արդյունք՝ կլիմայի փոփոխությանը հարմարվողականության բարձրացմանն ուղղված նախագծերի մրցույթին:

Մրցույթի նպատակն է բացահայտել և ֆինանսավորել համայնքների (բնակավայրերի) սոցիալ-տնտեսական կարիքներին համահունչ, ոլորտային հիմնախնդիրների լուծմանն ու համայնքների զարգացմանն ուղղված բնապահպանական ուղղվածության նախագծեր:

Նախագծերի ընդհանուր բյուջեն կազմում է 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Հավանության արժանացած յուրաքանչյուր նախագծի իրականացման համար նախատեսվում է տրամադրել շուրջ 20,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի աջակցություն նյութական/բնեղեն տեսքով այն համայնքներին (բնակավայրերին), որտեղ բնակիչները պատրաստ են ստեղծել Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ և համաձայն են նախագծի արդյունքում ստացվող եկամուտները կառավարել շրջանառու ներդրումների սկզբունքով (տե՛ս կից ներկայացված բուկլետը): Նախագծի ընտրության պարտադիր նախապայմաններից է համայնքի (բնակավայրի) կողմից և/կամ այլ աղբյուրներից դրամական և/կամ բնեղեն տեսքով համաֆինանսավորման առկայությունը:

Մրցույթին կարող են դիմել ՀՀ փոքր քաղաքային և գյուղական համայնքներում (բնակավայրերում) տեղի բնակչության մասնակցությամբ ձևավորված քաղաքացիական նախաձեռնող խմբերը և արդեն ձևավորված հիմնադրամները, ինչպես նաև ՏԻՄ-երը, համատիրությունները, որոնք պատրաստ են այս նախագծով ստեղծված միջոցների շահագործումից ստացված եկամուտները կառավարել քաղաքացիական շրջանառու ներդրումների սկզբունքով:

Կից բերված ձևաչափով կազմված ներդրումային նախագծերը կընդունվեն մինչև ներդրումային նախագծերի համար նախատեսված բյուջեի սպառվելը: «ԽԱԶԵՐ» ՀԿ-ն հանձն է առնում հայտատուներին տրամադրել տեխնիկական, փորձագիտական, խորհրդատավական ծառայություններ Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների ստեղծման և ներդրումային նախագծերի մշակման հարցում: Խորհրդատվական հանդիպումները տեղի կունենան ուրբաթ օրերին ժ.18:30-ից 20:00, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նիստերի դահլիճում (Երևան 0010, Խանջյան 11, 4-րդ հարկ)

Պարզաբանումների և լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

Հեռ.՝ 091 240 081, 093 737 279:
Էլ.փոստ՝ info@khazer.org, a.hambartsumyan@khazer.org:
Կայք՝ www.khazer.org

Սարյան 38/27, Երևան, Հայաստան
հեռ.՝ (37410) 583 932
ֆաքս՝ (37410) 583 933
էլ.փոստ՝ a.hambartsumyan@khazer.org

Сарьяна 38/27, Ереван, Армения
тел. (37410) 583 932
факс: (37410) 583 933
эл.почта: a.hambartsumyan@khazer.org

38/27 Saryan Str., Yerevan, Armenia
tel. (37410) 583 932
fax: (37410) 583 933
e-mail: a.hambartsumyan@khazer.org

ՀԱՅՏԻ ՁԵՎԱՉԱՓ

1. Նախագծի անվանումը:
2. Նախագիծը ներկայացնող կառույցը, հիմնադրման ամսաթիվը, կազմակերպության ղեկավարը և իրականացման պատասխանատուն, կոնտակտային տվյալները (գրանցման և գործունեության հասցե, հեռախոս, էլ փոստ և այլն): Նախաձեռնող խմբերի դեպքում՝ բնակիչների ընդհանուր ժողովի արձանագրությունը:
3. Նախագծի իրականացման վայրը (Մարզ, համայնք/բնակավայր):
4. Նախագծի համառոտագիր՝ թեմատիկ ոլորտը, նախագծի նպատակը, ակնկալվող արդյունքը, իրականացման հիմնական քայլերն ու տևողությունը, նախագծի արժեքը, որում՝ ՓԴԾ նախագծից ակնկալվող գումարի չափը (ոչ ավելի քան 1 էջ):
5. Կարիքի հիմնավորումը, առկա իրավիճակը և նախագծի իրականացման համար առկա նախադրյալները (ոչ ավելի քան 1 էջ):
6. Սպասվող բնապահապանական (այդ թվում՝ կլիմայի փոփոխության մեղմման) և սոցիալական ազդեցությունը (ոչ ավելի քան 0,5էջ):
7. Տեխնիկա-տնտեսական հիմնավորումը, ստեղծված հիմնադրամներին ներդրումների վերադարձելիության տևողությունն ու հաշվարկը:
8. Մանրամասն բյուջեն և իրականացման հստակ ժամանակացույցը:
9. Ներդրումային նախագծի կայունության ու շարունակականության հիմնավորումը և երաշխիքները (ոչ ավելի քան 0,5 էջ):
10. Սեփական և հնարավոր հարակից կամ հավելյալ ներդրումների ձևը և չափը:
11. Հնարավոր ռիսկերը և դրանց կառավարման Ձեր մոտեցումները (ոչ ավելի քան 0,5 էջ):
12. Նախագծի մրցունակությանը նպաստող լրացուցիչ տեղեկատվություն՝ օր. տեղեկատվություն նախկինում հաջողությամբ իրականացված նախագծերի մասին, նմանատիպ գործունեության նախկին փորձը, տեղում առկա մասնագիտական ներուժը և այլն:

Ներդրումային նախագծին կից անհրաժեշտ է ներկայացնել կազմակերպության գրանցման վկայականը, նախաձեռնող խմբի դեպքում՝ համայնքի կամ բնակավայրի կամ համատիրության բնակիչների ընդհանուր ժողովի արձանագրությունը:

Սարյան 38/27, Երևան, Հայաստան
հեռ.՝ (37410) 583 932
ֆաքս՝ (37410) 583 933
էլ.փոստ՝ a.hambartsumyan@khazer.org

Сарьяна 38/27, Ереван, Армения
тел. (37410) 583 932
факс: (37410) 583 933
эл.почта: a.hambartsumyan@khazer.org

38/27 Saryan Str., Yerevan, Armenia
tel. (37410) 583 932
fax: (37410) 583 933
e-mail: a.hambartsumyan@khazer.org